Լևոն Խեչոյան

Կորեացին

Վագոնի թախտին արաբի նման ծալապատիկ նստած, պատուհանից դուրս, ցերեկվան ու գիշերվան նայելով՝ երեսուն վեց ժամ ճամփա գնացի:

Իմ հեռանալու վեցերորդ ամսին՝ գիշերվա ժամը չորսին, վեր թռա քնից . անձրեւը ցնցում էր տնակը: Մթան միջով անցնող խոշոր կաթիլների արագընթաց զարկը, հողը ցնցելը, հողի հետ՝ տնակը, տնակի հետ սեւ շանն ու թիթեղյա տանիքը ծեծելը միայն առաջին օրերին էր անսովոր, ցերեկվա ծանր աշխատանքից հետո մեր քունը քանի գնում, ինքնամոռաց ուշագնացության էր նմանվում:

Ոտքերս կախեցի մահճակալից, մթան մեջ հենց աչքերս բացեցի, արդեն գիտեի կին ուզելս: Միտքս շուկայի գիշերային սրճարանի կանանց մասին էր: Նրանք ժամը մեկին-երկուսին գարեջրից արդեն արբած էին լինում, սկսում էին հաճախ վազել կամրջի տակ՝ պպզելու: Այդ ճանապարհին կարելի էր վարձել նրանց: Մտածեցի սրճարանի դռանը հանդիպած՝ դեմի ատամները փտած, կիսաջարդ կնոջ մասին, երբ քիչ էր մնում՝ քսան ռուբլով գնայի նրա մոտ:

Դրանից հետո գիշերները գործատեր հայի մոտից հաճախ էի փախչում շուկայի սրճարանը:

Մոսկվայում, ամեն քայլափոխի միլիցիոներները փաստաթուղթ են ստուգում, երկրի թշնամուն են որոնում: Արդեն շատ հեռվից, շուրջբոլորակի մի հայացքով, նրանց դարանանման ընտրած դիրքը գիտեմ, գիտեմ՝ որտեղից է դուրս գալու: Սեղմելու է մետրոյի մուտքի դռներին, պատերի մութ անկյուններին, փոստի

գովազդային վահանակին, պատկերասրահի անցուղու բազրիքներին: Ինչքան հեռանում եմ, ինքն էլ է գալիս: Լայնատարած փողոցներում հոսում են մեքենաները, մարդիկ: Սեւ: Աղմուկի մեջ եմ, վնգում է ներսս գվվոցն այդ դեղին: Լիալուսնի ամբողջ առաջին քառորդը անձրեւելու է: Պատահում է՝ հնարավոր չէ խույս տալ, գործատեր հայի կեղծ կնիքով իմ գրանցման մասին տեղեկանքն եմ ցույց տալիս: Եթե սուտը բացում, կաշառք են ուզում՝ իբրեւ տուգանք: Պետք է ասեմ . «Շինարար եմ, մի տարի է՝ աշխատում ենք, դեռ աշխատավարձ չենք ստացել, խղճացեք»: Գործատեր հայն է սովորեցրել այդպես խոսել, ասել է . «Դա էլ որ չանցնի, կգնաք մի վեց ժամ կնստեք բաժնի խցում, հետո բաց կթողնեն, պահեն ի՞նչ պիտի անեն»:

Ինքը մեզ փակ «Ուազով» էլ տանում է աշխատանքի՝ ժամը վեցին: Վարորդը եւ նրա կողքին նստածը պիտի ճանապարհաշինարարի հագուստով լինեն, այդպես ստուգումները քիչ հավանական են: Հացը հենց փողոցում են տալիս, քսան հոգով՝ միանման նարնջագույն ժիլետներով, հուլունքաշարի նման ձգվել ենք մայթին, ծնկների վրա, թղթե ափսեներից ուտում ենք անալի, գունդ-գունդ սառը մակարոնը, քրքներիս թացը վեր-վեր քաշելով՝ նայում ենք գույնզգույն անձրեւանոցներով անցնող-դարձող կանանց քայլվածքին, նրանց մասին ըղձալի դատողություններ անում:

Մանր, չնկատվող անձրեւի թացով թրջվում է քաղաքը:

Այդ ճաշից հետո գործատեր հայը, միայն հաց ու ջրով, մինչեւ տասնմեկը-տասներկուսը աշխատեցնում է, երբեմն նաեւ ամբողջ գիշերը, ասում է . «Խոմ չենք թողնի ասֆալտը «Կամազի» շալակին սառի,– ասում է,– ով դժգոհ է, ով չի ուզում փող աշխատի, թող թողնի-հեռանա»: Ինձ ասում է . «Դե, ել գնա, բոլ եղավ: Չեմ հասկանում ինչի՞ց ես դժգոհ: Հաց չունեիր, տուն չունեիր, փող չունեիր, գրանցում չունեիր, փողոցից վերցրի, բերի, էն էլ ֆլեյտայիդ խաբնվեցի, դեռ պարզ էլ չի, նվագել գիտե՞ս, թե չէ, վեց ամսվա մեջ քո ֆլեյտան անգամ կատվի նման չմլավեց, մի անգամ տուփից չհանեցիր, հունարը չգիտեիր, իսկ ես այդ տուփին խաբնվեցի, տեսքդ ինտիլիգենտի տպավորություն էր տալիս: Հիմա տղերքին կասկածելի, չհավատալու բաներ ես ասում: Ինչո՞ւ ես տղերքին իմ դեմ հանում,– ասում է,– ֆլեյտադ վերցրու, դե, ել գնա»: Մի քանի օգնական էլ ունի՝

կոստյումների տակ, մեջքներին անօրինական զենք են կրում: Նրանք էլ են ասում . «Ֆլեյտադ վերցրու, դե, ել գնա»: Գործատեր հայը ծոցագրպանից մի քանի թղթադրամ է հանում, ասում է . «Առ: Ֆլեյտադ վերցրու, դե, ել գնա»: Չեմ վերցնում: Ասում է . «Ինձ համար մեկ է, վեց ամիս ես աշխատել, թե մեկ, այդքան է հասնում, չե՞ս ուզում, էդ էլ չենք տա, եւ ասում է, եւ հանկարծ չհոխորտաս, գրանցում էլ չունես, ինչ ասես կարող է պատահել քեզ հետ: Ես հիմա չեմ էլ կաս կածում, հաստատ գիտեմ՝ ֆլեյտա նվագել էլ չգիտես, թե չէ այս տեղերում ի՞նչ գործ ունեիր, դու ո՞վ ես: Հանկարծ չհոխորտաս, գիտե՞ս»:

Մի քանի օգնականները՝ մեկը «Ուազն» է վարում (մեզ աշխատանքի տանող-բերողն է), մյուսը, որտեղ ապրում ենք, քաղաքի մյուս ծայրամասից ճաշն է բերում, էն մյուսը՝ բանկից դրամ ստացողն է, բոլորով վրա են գալիս, ասում են . «Ֆլեյտադ վերցրու, շուտ արա, դե, ել գնա»:

Վրայիցս պոկում են նարնջագույն ժիլետը, մայթից հրում են փողոց, ասում են . «Դե, ել գնա, եւ ասում են, եւ քո ի՞նչ գործն է, աշխատավարձ կտա՞նք, թե՝ չէ: Քեզ հաց տալիս էինք, սովա՞ծ չէիր, էլ ի՞նչ էիր ուզում»: Շուրթերիցս քաշում, ոտքերի տակ են գցում ծխախոտս: Ասում են . «Ֆլեյտադ վերցրու, դե, ել գնա»:

Մինչեւ փողոցի վերջը՝ տների շրջադարձին հասնելը մտածում էի՝ կարող է մատնեմ: Ետ նայեցի . տղաները քսան հոգով, նարնջագույն ժիլետներով պեծկլտում էին սեւ, նոր փռված նավթահոտ ասֆալտի վրա:

Սառնարան, վագոն-մեքենաներից ձուկը գիշերն են դատարկում: Կորեացին զբաղվում է արգելված ձկնատեսակների վերավաճառքով: Նրա սեփական տունը քաղաքի արվարձանում է: Մարդաբոյ, յոթանասուն-ութսուն կիլոգրամանոց ձուկը բերում, գցում են ալյումինե թիթեղով երեսպատված սեղանին, տակով էլեկտրական ջեռուցիչ է անցնում, հալոցքից ծովի, մեզի, աղի հոտ է տարածվում: Չորս հոգով՝ երկուսս մի կողմում կանգնած, երկուսը՝ մյուս, կտրատում ենք ձուկը: Շերտերը հինգ-հինգ շարում՝ ցելոֆանե ծրարների մեջ: Պայմանը մինչեւ լուսաբաց աշխատելն է: Կորեացին մեզ խոստացել է, կվճարի: Սեղանի մյուս կողմում կանգնածը եւ կողքինս ուկրաինացիներ են, նրանց էլ փողոցից է բերել, մյուսը՝ իմ դիմացինը, որ բարակ շերտերը ծրարների մեջ է շարում, կորեացու աղջիկն է: Օրերով չի խոսում, անընդհատ ձեռներիս է նայում

եւ իր գործն անում: Ժամը երկուսին գնում է քնելու:

Մենք ամբողջ գիշերն ենք աշխատում:

Կորեացու հարեւաններն անընդհատ հետեւում են նրան ու մատնում: Քնում ենք լույսը բացվելուց հետո, այգում՝ փայտե կոճղերի վրա դրված «Ուրալ» մեքենայի հերմետիկ թափքում: Կորեացին արկղավորված ձուկը վրա-վրա շարում է մեքենայի խցիկում, տանում է քաղաք՝ խանութպաններին բաժանելու:

Այդ ժամանակ էլ այգուց աննկատ դուրս եմ գալիս: Նեննեն գնում է ռուսաց լեզվի դասընթացների, հետեւում եմ: Թիկունքից սեռը չի ջոկվում՝ պատանեկան կլոր հետույք: Երկու կանգառ ենք անցնում, թեւանցուկ է անում: Փոքրիկ, պինդ ստինքը թեւս է շոշափում: Հայրն ուզում է նրան ասիական ծագում ունեցող ինչ-որ մեկի հետ ամուսնացնել, որը Բուդդային է հավատում եւ փող ունի:

Ինչ առնում է ճանապարհին, վայրկենապես ուտում եմ: Երկու գարեջուր է վերցնում: Իմ մշտական անփողությունը համարյա լացացնում է ինձ: Ոչ մի գնով ֆլեյտան չեմ վաճառի: Նեննեն ասում է . «Անգամ ձուկը կտրատելիս՝ մատներդ նվագում են, ես անընդհատ լսում եմ»: Համբուրում եմ ծոծրակը, միանգամից ընկնում եմ այս դեմ քի, սեռը չնկատվող այս մարմնի, այս դեղինի, այս դեղին համի մաշ կի մեջ: Սիրտս խնդում է, մարմնիս մեջ իրար են հաջորդում տաքն ու պաղը: Տեղ չկա, որ մենակ մնանք, ոչ մի ծածկի տակ չենք կարող գնալ: Ինքն էլ չգիտի:

Եկեղեցի ենք գնում, խցերից մեկում մոմ ենք վառում, համբուրվելիս՝ նկատում է հոգեւորականը, դիտողությունը շուրթերին՝ մեզ դուրս է անում: Թափառում ենք աղմուկի մեջ, վնգում է մեջս գվվոցն այդ դեղին, անցնում ենք փողոցե փողոց՝ ֆլեյտան թեւիս տակ:

Նինա Սերգեեւնան: Սիկտիվկարից էր՝ ռուս: Կապույտ աչքեր ուներ: Ընդգծված մարմին: Նուրբ դիմագծեր: Սպիտակ ատամնաշար ուներ:

Արդեն կոնյակի երրորդ, թե չորրորդ բաժակն է խմել, ես խմիչքին ձեռք չեմ տալիս, կորեացին արգելել է՝ կարող է մեքենան վարեմ:

Նինա Սերգեեւնան երկու ափերով երկու ստինքներին է ձեռք տալիս, ասում է. «Եթե մեզ՝ կնանոցս թույլ տան, ձեզ չեչեններիդ, մեր ծծերով կխեղդենք, դուք ո՞վ եք»: Ասում եմ. «Ես չեչեն չեմ»:

– Ասում է. «Կապ չունի, դուք՝ կովկասցիներդ, բոլորդ էլ չեչեն եք»: Նինա Սերգեեւնան նոր է դադարեցրել Նենեի՝ չդադարող արյունահոսությունը: Նրա աշխատասենյակի դուռը անընդհատ բացում են, գոռում է. «Չի կարելի»: Կոնյակ ենք խմում: Կորեացին ամեն կերպ ուզում է նրանից խոսք պոկել, թե այդ ի՞նչ արյունահոսություն է, ինչի՞ հետ է կապված: Անընդհատ նպատակադիր խոսում է: Ասում է. «Նինա Սերգեեւնա, գիտե՞ս, հազար ինը հարյուր յոթանասունինը թվա կանին, Նենեն երբ մի տարեկան էր, մսաղացի պտուտակը կուլ տվեց, եւ փառք Բուդդային, առանց վիրաբուժական միջամտության անցավ»: Արձագանք չկա: Լուսնի առաջին քառորդից սկսած անձրեւ ում է քաղաքի վրա:

Ասիական ծագում ունեցող, Բուդդային հավատացող փեսացուն եկ ավ: Զանգահարել տուն՝ իմացել է: Գաղտնագիր կողպեքով, մաք ուր կաշվից կարված պայուսակը դեղին ձեռքից կախ, կանգնել է բոլորիս դիմաց: Զննելիս է սեռը նկատվում: Կորեացին աթոռ է դնում նրա տակ: Լիալուսնի երրորդ քառորդն էլ այսպես անձրեւելով կանցնի: Մտքումս խնձորի պատկեր է ծագել, զարգանում՝ երկրորդ հարկի՝ Նենեի պառկած հինգերորդ սենյակն էլ կա:

Կորեացին դարձյալ նպատակադիր խոսում է, կոնյակ եմ խմում, շրջվել է դեպի ինձ, թե. «Գիտե՞ս, արմյան, հազար ինը հարյուր ութսունմեկ թվականին, երբ Նենեն երեք տարեկան էր, խաղալիք մեքենայի ղեկը կուլ տվեց եւ, փառք Բուդդային, դարձյալ առանց վիրա հատական միջամտության անցավ»: Նինա Սերգեեւնան չի արձագանքում, ինձ ասում է, թե. «Ի՞նչ պարտություն, եթե մեզ թողնեն, ռուս կնոջ ծծերի փափկությունը բերաններիդ դրած՝ մենք ձեր ամբողջ Չեչնյան խեղդամահ կանենք»: Դարձյալ զույգ ձեռքերով հափռում է զույգ ստինքները: Խնձորին եմ նայում: Նրան ասում եմ. «Մենք քրիստոնյա ենք»: Ասում է. «Կապ չունի, ամբողջ Կովկասը չեչեններ են»:

Ճանապարհին կորեացին ասում է. «Նինա Սերգեեւնան լավ գինե կոլոգ է, բայց՝ հարբեցող»: Դեռ գլխի չի ընկել, ամեն կերպ ուզում է իմանալ՝ Նենեի հետ

ի՞նչ է պատահել: Ասում է. «Գիտե՞ս, արմյան, հազար ինը հարյուր իննսունմեկ թվականին, երբ Նենեն տասներեք տարեկան էր, մեր աղախնու հետ, իմ նկուղից դուրս գալը տեսավ, դռան բանալին կուլ տվեց եւ, փառք Բուդդային, դարձյալ առանց վիրաբուժական միջամտության անցավ»: Ինչքան միտքս գնում է, հեռվում որոնում եմ խնձորը:

Գիշերը, Նենեի փոխարեն մայրն է իմ դիմաց կանգնել, ձկան բա բակ շերտերը շարում է ծրարների մեջ: Երեք-չորս ժամից միանգամից ընդհատում է աշխատանքը: Ոչ ինձ, ոչ էլ կորեացուն՝ գետնին է նայում: Գլխապտույտ ունի: Գնում է:

Հաջորդ օրը՝ գիշերը, նրան կորեացին է փոխարինել, դեմ դիմաց ենք, ձկան բարակ շերտերը շարում է ծրարների մեջ, հանկարծ կանգնում է, նայում աչքերիս մեջ, անբնական գոռոցով կողքին դրված դանակը նետում է ինձ վրա: Շուրջը դարձյալ ուրիշ, ինչ-որ սպանող բան է որոնում: Գոռում է. «Արմյան, ձեռքդ կկտրեմ, մատներդ գեղեցիկ են, աղջիկս սիրահարվել է մատներիդ»:

Ուկրաինացիներից մեկը նրա թեւերից է կառչել, մյուսը ինձ դուրս է տանում: Դրսում՝ մթան մեջ, ուղեղիս վրա դեռ զգում եմ կրով սպիտակեցված նկուղի ճերմակ-ճերմակը: Ամբողջ գիշեր փողոցում գնալ-գալով՝ ծխում եմ:

Հաջորդ օրն ինքն է կանգնած դիմացս, Նենեն դեռ չի եկել հիվանդանոցից: Երեք ժամ արդեն աշխատել ենք, կես մետրանոց տապորն է շպրտում ինձ վրա, աղաղակում է, թե. «Արմյան, սիրտդ կկտրեմ, մատներդ շատ գեղեցիկ են, աղջիկս սիրահարվել է մատներիդ»: Ուկրաինացին ինձ դուրս է տանում, բոլոր այդպիսի հարձակում ներից հետո հստակ չէի կարողանում պատկերացնել, թե ուզածս ինչ է: Այգում ծխում ենք վրա-վրա: Առավոտյան կորեացին տոմսի փող է տալ իս, ասում է. «Որպեսզի գիշերը քնած տեղդ չխեղդեմ, գնա՝ որտեղից եկել ես»:

Նենեն դեռ չի եկել հիվանդանոցից, ֆլեյտան թեւիս տակ՝ հեռանում եմ: Աղմուկի մեջ եմ, վնգում է մեջս գվվոցն այդ դեղին: